

**Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն**

**Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Լ Ի Դ Ա Ե Դ Ի Շ Ե Ի**

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
(1292-1375 ԹԹ.)**

**ԻԵ. 00. 01 - «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**Ե Ր Ե Վ Ա Ն - 2013**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**СААКЯН ЛИДА ЕГИШЕЕВНА**

**РОЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ПОЛИТИЧЕСКОЙ  
ЖИЗНИ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ  
(1292-1375 ГГ.)**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени кандидата  
исторических наук по специальности  
25. 00. 01 « Теория и история религии (религиоведение)»**

**ЕРЕВАН-2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների  
**դոկտոր Ա. Ս. Սահակյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Յ. Գ. Մարգարյան**

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ **Ա. Է. Զովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Սատենադարան. Մեսրոպ  
Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
գիտահետազոտական ինստիտուտ


Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 26-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի 068 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  Ա. Յ. Բալյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель՝ доктор исторических наук  
**А. С. Саакян**

Официальные оппоненты՝ доктор исторических наук, профессор  
**А. Г. Маргарян**

кандидат исторических наук, доцент  
**А. Э. Оганнисян**

Ведущая организация՝ Ереванский Матенадаран.  
Институт древних рукописей  
имени Месропа Маштоца

Защита диссертации состоится 26-го декабря 2013 г., в 12:00 часов на заседании специализированного совета 068 в Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван 0025, Абовяна, 52, ЕГУ, 6-ой корпус, актовый зал.  
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 25-го ноября 2013 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат исторических наук, доцент  А. Ю. Балян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՎԻՐԸ

### **Թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը:**

Կիլիկիայի հայկական պետությունը մեծամասամբ շրջապատված է եղել թշնամաբար տրամադրված այլադավան պետություններով (Իկոնիայի սուլթանություն, Եգիպտոսի սուլթանություն, բյուզանդական կայսրություն, թուրքմեններ, ամիրայություններ ու աթաբեկություններ) և զարմանալի է, որ այն կարողացավ ամբողջ երեք դար գոյատևել՝ մշտապես խուսանավելով նրանց միջև:

Ատենախոսության մեջ փորձ է արվում պարզելու, թե որն էր իրականում Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ ղեկավարների «զենքը», որի շնորհիվ փորձեցին դիմակայել թշնամիներին՝ սխալմամբ կարծելով, որ նախկինի պես հզոր բանակ ու մաքառող ժողովուրդ ունենալու փաստը բավական չէ, և որ հույսը պետք է դնել արտաքին օգնության վրա: Հարկ է նկատել, որ Կիլիկյան հայոց պետությունը մշտապես դաշնակիցների կարիք է ունեցել, որի համար էլ ձգտել է լավ հարաբերություններ հաստատել հարևաններից մեկի կամ մի քանիսի հետ չեզոքացնելու համար մյուսների վտանգը: Բնական է, այդ ձգտումներն որոշ առումներով փոխադարձ են եղել, և արդյունքում խթանել են Կիլիկիայի դիվանագիտության զարգացմանը:

Ուսումնասիրությունն ընդգրկում է Կիլիկիայի հայոց կաթողիկոսության 1292-1375 թթ. կրոնական ու քաղաքական գործունեության պատմությունը, որն ասես «լուռ ցավով» ուղեկցում էր պետության անկման ու դանդաղ կործանման ընթացքին: Ատենախոսական վերլուծության **ժամանակագրական սահմանների ընտրությունը** պայմանավորված է հայ եկեղեցու պատմության ամենադրամատիկ և ներքնապես հակասական շրջաններից մեկով՝ հայ-լատին վերնախավային հարաբերությունների ծավալմամբ և վերջինիս նկատմամբ հայ եկեղեցու և ժողովրդի դիրքորոշմամբ: Երբ որոշակիորեն ժողովրդից և եկեղեցուց սահմանագատվում են արքունիքը և սրա ազդեցությամբ՝ կաթողիկոսարանը, դրանից հետո կիլիկյան պետության անկումը որքան էլ դանդաղ, միևնույնն է, դառնում է անկասելի: Այդ առումով 1292-1375 թթ. հայ եկեղեցու կյանքում տեղ գտած իրադարձությունների քննական արժևորումը և դրանց քաղաքական ու աշխարհայացքային հիմքերի բացահայտումը **եկեղեցաբանական ու պատմագիտական մեծ նշանակություն ունի**, որովհետև միտված է եկեղեցական կառույցի, որպես ազգային միասնականություն ապահովող գործոններից մեկի, համակողմանի գիտական ուսումնասիրությանը: Ատենախոսության մեջ քննարկվող հիմնահարցերը մեծապես կարևորվել են նաև այն տեսանկյունից, որ ուսումնասիրվող ներեկեղեցական և միջեկեղեցական իրադարձություններն ուղղակիորեն առնչվում են հայ ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության և հոգեկերտվածքի պատմաֆունկցիոնալ դրսևորման ու զարգացման հիմնախնդիրների հետ:

Հետազոտական թեմայի **արդիականությունը** պայմանավորված է քննարկվող ժամանակաշրջանի վերաբերյալ նախկինում ձևավորված մոտեցումների վերարժևորման, Կիլիկիայի հայոց կաթողիկոսության պատմության միակողմանի, աչառու, երբեմն էլ ոչնչով չհիմնավորված մերժողական մոտեցումները հաղթահարելու հրամայականով: **Արդիականությունը** պայմանավորված է նաև նրանով, որ փորձ է արվում կիրառել եկեղեցաբանական մոր հայացք հայ առաքելական եկեղեցու առանձին ներկայացուցիչներին պատմական տվյալ համատեքստում գնահատելու հարցերում, ինչպես նաև այդ իսկ հայացքով շարադրել Կիլիկիայի հայոց կաթողիկոսության անաչառ, հավասարակշռված ուսումնասիրություն, քանի որ պատմագիտության և եկեղեցաբանության համադրման մեթոդով աշխատություններ քիչ են գրվել, իսկ եղածներում իշխել են բևեռացված գնահատականներ՝ ջատագովական կամ մերժողական շեշտերով:

**Ատենախոսության նպատակը:**

ա) Ձեռագրերի, հիշատակարանների, սկզբնաղբյուրների համեմատական վերլուծության և գիտական գրականության մանրագնին հետազոտության հիման վրա վեր հանել, համակարգային վերլուծության ենթարկել 1292-1375 թվականների Կիլիկիայի հայոց կաթողիկոսության և Յոնի պապերի հարաբերությունների կրոնա-քաղաքական հիմքերը, ճշգրտել և հնարավորինս ամբողջական ներկայացնել դրանց տեղն ու դերը հայ եկեղեցու պատմության մեջ,

բ) պատմահամեմատական հիմնարար սկզբունքներով եկեղեցագիտության դիրքերից համակողմանի արժևորել XIII դ. վերջի - XIV դ. սկզբի հայ-հռոմեական նամակագրությունը, նրա աստվածաբանական ուղղվածությունը, կողմերի ձգտումներն ու նպատակները,

գ) սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադրական վերլուծությամբ բացահայտել հայ եկեղեցու դավանաբանական էությունը բնութագրող կարևորագույն այնպիսի երևույթ, ինչպիսին կաթոլիկ-միարարական շարժման նկատմամբ վերաբերմունքն է՝ իր ողջ բարդ կառուցվածքով, ներքին հակասականությամբ և ճակատագրական հետևանքով,

դ) պատմահամեմատական անկողմնակալ դիտարկումներով լուսաբանել և արժևորել հայ եկեղեցու ունիթորական ու հակաունիթորական դիրքորոշման հիմքերը և վեր հանել այդ գործընթացում տեղական եկեղեցական ժողովների տեղը, դերը և նշանակությունը,

ե) սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների վերլուծությամբ բացահայտել Կիլիկիայի 1292-1375 թթ. ընկած ժամանակաշրջանի կաթողիկոսների դերը, երևան հանել նրանց գործունեության եկեղեցա-քաղաքական դրոպապատճառները,

զ) մեկնաբանել հայ առաքելական եկեղեցու ներեկեղեցական և միջեկեղեցական հարաբերությունների զարգացման դինամիկան:

**Ատենախոսության մեթոդաբանական սկզբունքները:** Ատենախոսությունը շարադրվել է անաչառության դիրքերից՝ հետազոտական հիմք ընդունելով քննարկվող հիմնահարցերի, փաստական նյութի, սկզբնաղբյուրների եկեղեցաբանական վերլուծության, համադրման և ընդհանրացման պատմական և համեմատական **մեթոդաբանությունը:** Աշխատության մեջ սկզբնաղբյուրների, դրանց նվիրված աշխատությունների բովանդակային վերլուծության կիրառմամբ վերանայվել և վերարժևորվել են քննարկվող հիմնահարցերի հակասական և իրարամերժ հայեցակարգերն ու մոտեցումները:

**Ատենախոսության գիտական նորույթը:**

ա) եկեղեցաբանության և պատմագիտության մեջ շրջանառվող հայեցակարգերի համադրության միջոցով ամբողջական վերլուծության է ենթարկվել հայ եկեղեցու պատմության կարևորագույն ժամանակաշրջաններից մեկը,

բ) եկեղեցաբանության դիրքերից առաջին անգամ համակարգված ու ամբողջական տեսքով ներկայացվում են 1292-1375 թվականների Կիլիկիայի հայոց կաթողիկոսարանի կրոնա-քաղաքական հիմքերը, բացահայտվել և համակողմանի արժևորվել են վերջինիս տեղը, դերը Կիլիկիայի պատմության մեջ,

գ) առաջին անգամ հրապարակ են հանվել նոր ձեռագրեր, որոնք օգնել են լուսաբանել հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին վերաբերող հարցեր,

դ) քննվում է Հեթում Բ թագավորին հղած նամակի հեղինակային պատկանելության խնդիրը, նախորդ ուսումնասիրությունների, նաև նոր աղբյուրների հենքի վրա վերջնականապես որոշվում է նամակի հեղինակի ինքնությունը,

ե) ձեռագրերի և սկզբնաղբյուրների պատմական վերլուծությամբ վերարժևորվել և նորովի են ներկայացվել Կիլիկիայի հայոց կաթողիկոսության վերաբերյալ միակողմանի ու ծայրահեղ հայեցակարգային ընթերցումները, ինչպես նաև առանձին հեղինակների կանխակալ մոտեցումները, անաչառության դիրքերից վերանայվել և գիտական ամփոփ տեսքով են ներկայացվել նաև նախկին գաղափարականացված մոտեցումներն ու լուծումները,

testimonies but meanwhile some exaggerations (regarding to the anathema), and that there were also statements not regarded to the mystery of water and that the explanations were spurious they maintained other interpretations. Did Grigor Anavazetsi realized that wine and water mixed together represent the two natures of Christ? Perhaps in Anavazetsi's opinion water mixed with wine did not yet mean the acception of decisions of Chalcedon Council thinking that the other Eastern churches (Malabar, Syrian and Coptic) did Holy Mass with leaven bread and wine mixed with water but did not accept the teaching of Christ's two natures. In the thesis we maintain that the custom of unmixed wine and unleavened bread spread in Armenia is as much old as the tradition of wine mixed with water in Mediterranean Basin. Therefore, the Armenian liturgical traditions have been developed during many centuries had been transformed into unique components of the identity, refusal of which was just useless.

The foreign policy of Catholicosate had a mutual suppling character; it had an aim to get a support from the European countries and keep the spiritual life of the country from the direct intervention of Catholic Church as much as possible. Despite of consistent policy of Armenian spiritual and secular figures on that issue, Catholic Church quite succeed to spread its authority in some circles of the Catholicosate and the Royal court of Cilician Armenia. Moreover, even that the Royal court and Catholicos did not join to the Roman Church, making some concessions and trying artificially to adjust themselves to its demands, the catholic communities were established in some places of Armenia, like in - Nakhijevan, Artaz etc. These catholic communities not only struggled against the Armenian Church on confessional and liturgical affairs but also incited Papacy against the Armenian Church via different indictments.

It is substantiated in the thesis that the reason of destruction of Cilician Armenia was the political «naivety», connected with the mentality of the ruling class, according to which they thought that in the case of having the same confession with the Western countries, with the help of the external military forces it would be possible to avoid the impending downfall. However, as the History teaches us, the European rulers were firstly the politicians and they were not ready to launch unreal campaigns for Armenians. Therefore, the Armenian Kingdom of Cilicia was untimely ruined, but the Armenian Church not having a political «naivety», however waived its rights in order to save the Armenian statehood.

SAHAKYAN LIDA  
THE ROLE OF THE ARMENIAN CHURCH IN THE POLITICAL LIFE  
OF THE CILICIAN ARMENIA (1292-1375)

SUMMARY

The thesis is dedicated to the history of the religious and political activities of the Catholicosate of Cilician Armenia in 1292-1375. The borders of the chronological analysis of the thesis are selected taking into account the one of the most dramatic and internal conflicting period of Armenian Church: the spread of Armenian-Latin relations and the position of Armenian Church concerning these issues. The critical evaluation of events in Armenian Church life in the 1292-1375 and revelation of their political and ideological grounds are most important from the point of ecclesiology and historiography since their aim is detailed scientific research of the structure of the Armenian Church – one of the main factors providing national unity. The major questions discussed in the thesis were evaluated also from the point of view according to which Armenian Church internal affairs as well the relationship with the other churches are directly connected to the matters of Armenian identity, self-consciousness, and spiritual essence.

Amazingly Armenian Kingdom of Cilicia being surrounded with heterodox countries full of hostility, succeeded to exist for three centuries.

Thanks to the research of the sources, impartial analysis and systemization of council's constitutions, as well through the syntheses of conceptions in ecclesiology and historiography, in the thesis we tried to clarify what was the real power of the clerical and secular authorities to confront the enemies, knowing that for this it is not enough to have just powerful army and fighting people. It should be noted that the Armenian Kingdom of Cilicia always needed allied powers, therefore, it always tried to establish good relations with one or few of its neighbouring countries in order to prevent the danger.

The attitude of the Cilician Royal dynasties and the Catholicosate towards the Catholicism are discussed in this thesis as well. As a result of analysis of historical events it is stressed that although Armenian clerical and secular authorities were unanimous but they did not want wide society circles of Cilician Armenians (the mass far away from the politics and diplomacy) to be aware of their common plans. Though the church councils (1307 in Sis, 1316 in Adana, 1345 in Sis) artificially accepted the suggestions of the Pope of Rome to join to Catholic Church, aiming to get military support, however not getting this help and because of the resistance of the Armenian Clergy these suggestions of Rome were not carried out.

In this thesis for the first time is presented a detailed analysis of the letter written by Armenian Catholicos Grigor VII Anavazetsi to the Armenian King Hetum II. After the analysis both of Sis Constitution and Grigor Anavazetsi's letter it is stressed that the letter has authentic

զ) Կիլիկիայի հայոց թագավորության քաղաքական պատմության առանձնահատկությունների վերլուծությամբ բացահայտվել են հայոց կաթողիկոսության դիրքորոշումների հիմքերն ու ուղղվածությունը,  
է) առաջին անգամ կատարվել է Հեթում Բ թագավորին հղած նամակի բովանդակության մանրամասն վերլուծությունը:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:**

Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել հայ եկեղեցու պատմության գիտական ընդհանրացման գործում: Հետազոտական աշխատանքի արդյունքները, մասնավորապես. եկեղեցաբանական վերլուծական արդյունքը, բազմաթիվ հիմնահարցերի նորոպի լուծումներն ու ընդհանրացումները կարող են օգտագործվել նաև բուհական կրթահամակարգի հետևյալ բաժիններում՝

ա) ընդհանուր կրթական «Հայ եկեղեցու պատմություն» դասընթացի «Հայ առաքելական եկեղեցին 13-14-րդ դարերում» թեմատիկ նյութի շրջանակներում,

բ) ընդհանուր մասնագիտական «Հայ եկեղեցու պատմություն» դասընթացի «Հայ առաքելական եկեղեցին հայ-հռոմեական և հայ-բյուզանդական հարաբերությունների ծավալման փուլում» թեմատիկ նյութի շրջանակներում,

գ) բակալավրիատի «Արևմտյան և հայ եկեղեցու փոխհարաբերությունների պատմություն» և «Արևելյան և հայ եկեղեցու փոխհարաբերությունների պատմություն» դասընթացների համապատասխան թեմատիկ նյութի շրջանակներում,

դ) մագիստրատուրայի մասնագիտացված պատրաստման «Հայ եկեղեցին Կիլիկյան շրջանում» և «Եկեղեցաբանության պատմություն» դասընթացի համապատասխան թեմատիկ նյութի շրջանակներում:

**Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:**

Հետազոտական աշխատանքում օգտագործվել են հայկական և օտար սկզբնաղբյուրներ ու ուսումնասիրություններ: Աղբյուրների տեսությունը ներկայացվում է թեմատիկ շարադրանքին համապատասխան: Ատենախոսության համար աղբյուրագիտական արժեք է ստացել Մխիթար Ապարանեցու «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց ըստ կաթօլիկե սուրբ եկեղեցու և ընդդէմ հերձուածողաց» աշխատությունը: «Տրամաբանության» գիրքը հայկական և ընդհանրապես արևելյան միջնադարագիտության շատ հարցերի համար առաջնակարգ սկզբնաղբյուր է և, հակառակ իր հիմնական, աստվածաբանական, հակաճառական բնույթին, ունի կարևոր և հաճախ եզակի տեղեկություններ: Սսի 1307 թ. և Ադանայի 1316 թ. ժողովների գումարման վերաբերյալ «Տրամաբանության» գրքից զատ սկզբնաղբյուրներից նախ առանձնացվել են Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական», Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկերը և Ա. Մխիթարեանցի «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք», Մանսիի «Sanctorum Conciliorum et Decretorum collection nova... Supplementum», Թուրնեթի «Histoire politique et religieuse de l' Arménie depuis les origines des Arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l' an 1393)», Լ. Արփիի «A History of Armenian Christianity from the Beginning to our Own Time» և այլոց գրքերը: Օգտագործել ենք նաև «Հայ ժողովրդի պատմություն»,( III հ.), Մ. Չամչյանի «Պատմություն հայոց սկզբից մինչև 1784 թ.», Մ. Օրմանյանի «Ազգապատում. Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած» (հ. Բ) ուսումնասիրությունները ու Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյս Հռոմայ» աշխատությունը: Հարկ է նշել, որ վերջինս հանդես է եկել որպես հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու գաղափարի մոլեռանդ քարոզիչ, նպաստել է Արևմտյան Եվրոպայում Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմության վերաբերյալ սխալ

տեղեկությունների տարածմանը: Սակայն այս աշխատությունն այժմ ձեռք է բերել սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ նրանում օգտագործված աղբյուրների մի մասն անհետացել է: Օգտագործվել են եկեղեցաժողովներից անդրադարձած Դ. Բանդիի, Բ. Համիլթոնի, Գ. Հարությունյանի և այլոց հետազոտությունները:

1292 թ. Սսի ժողովը և Շռազատկի խնդիրը ներկայացնելիս՝ օգտվել ենք այնպիսի սկզբնաղբյուրներից, ինչպիսիք են Մատթեոս Ուռնայեցու «Ժամանակագրություն»-ը, Ա. Արրահամյանի «Յովհաննես Իմաստասերի Մատենագրությունը»-ը, Ի. Փափազյանի «Պատմութիւն եկեղեցական»-ը, Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ (XIII-XXVIII դդ.)» և Ֆ. Թուրմերիզի «Histoire politique et religieuse de l'Arménie» ուսումնասիրությունը: Կաթոլիկյան (մխիթարյան) վերլուծական գրականության շրջանակներում, որոնցում քննարկվող հոգևոր-կրոնական, եկեղեցական և դավանաբանական հիմնահարցերը, որպես կանոն, ներկայացվել են միակողմանի, գրվել են Կիլիկիայի հայոց կաթողիկոսության վերաբերյալ ամփոփ քննախոսություններ, որոնք սակայն եղել են հատվածական և իրականացվել են ընդհանուր խնդիրների համատեքստում: Այդ աշխատություններից են Հովսեփ Գաթրոճյանի «Հիմնական տարբերություն կաթողիկե և էջմիածնական դաւանութեանց»-ը, Ա. Պալճեանի «Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութիւն նոցա Հռոմէական եկեղեցոյ ի Փլորենտեան Սյունհողոսի» և Վ. Հացունու, Հ. Վարդանի «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն» աշխատությունները:

Հեթում Բ թագավորին հղած Գրիգոր է Անավարզեցու նամակի բովանդակությունը քննելիս՝ օգտվել ենք «Կանոնագիրք հայոց» (աշխ. Վազգեն Հակոբյանի), Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Յովհաննու իմաստասիրի Աւծնեցւոյ Հայոց Կաթողիկոսի մատենագրութիւնք», «Patrologia latina», «Patrologia Graeca», «Յովհաննու Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթեոս» և Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ» սկզբնաղբյուրներից: Այս հարցի քննության վերաբերյալ մեր եզրակացությունները հիմնավորելու համար օգտվել ենք Աբել Օղլուգեանի «Մատենագրական հետազոտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ», Ռոբեր Տաֆտի «Water into Wine», Ն. Վ. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրավունքը» մենագրություններից, Ն. Գարսոյանի, և այլոց հոդվածներից:

Կիլիկիայի քաղաքական պատմությունը շարադրելիս՝ օգտագործվել են Մինաս Համդեցու «Ազգաբանութիւն Հայոց» և Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» պատմությունները, Լ. Ս. Խաչիկյանի, Հ. Նալբանդյանի, Հ. Դարդեղի և Սմբատ Սպարապետի աշխատությունները: Հովհաննես Դարդեղը Կահիրե գերի տարված Կիլիկիայի վերջին արքա Լևոն Լուսինյանի խոստովանահայրն էր: Նրա պատմական բնույթի աշխատությունը շարադրվել է հին ֆրանսերեն և նպատակ է ունեցել ներակայացնել հայոց պատմությունը առասպելական ժամանակներից մինչև Կիլիկիայի հայոց թագավորության վերջին օրերը: Միակ սկզբնաղբյուրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է Կիլիկիայի հայոց պետության՝ 1321 թ. մինչև XIV դ. վերջին քառորդն ընկած ժամանակահատվածի պատմությունը: XIII դ. պատմիչ և զորավար Սմբատ Սպարապետը (Գունդուարբլ), լինելով դեպքերի ժամանակակիցն ու ռազմաքաղաքական մի շարք անցուդարձերի անմիջական մասնակիցը, բացառիկ հավաստի տեղեկություններ է թողել: Հեղինակն իր «Տարեգրքում» հիմնականում անդրադարձել է ռազմաքաղաքական իրադարձություններին:

Հայկական սկզբնաղբյուրների շարքում մեծ կարևորություն են ներկայացնում նաև Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները: Հեղինակները, լինելով Կիլիկիայի հայոց պետության XIV դ. գործիչներ, քաջատեղյակ են եղել քաղաքական ու դիվանագիտական անցուդարձերին: Մասնավորապես, շատ կարևոր են նրանց հաղորդած տեղեկությունները 1321 թ. Թիմուրտաշի կազմակերպած

католической церковью, однако, в результате отсутствия ожидаемой поддержки, а также противодействия самого армянского духовенства не были осуществлены.

В работе впервые представляется подробный анализ содержания письма патриарха Григора VII-го, адресованного Гетуму II-му. В результате анализа «Конституции» Сиса и письма Григора Анаварзечи обосновывается, что в письме даются как точные свидетельства, так и определенные преувеличения, касающиеся лишения церковных прав. Выявляются также сведения о проведении таинства без смешения воды с вином с принудительными объяснениями, что могло стать поводом разнообразных интерпретаций. По всей видимости, согласно Анаварзечи, смешение воды еще пока не означало косвенного принятия догматических учений, определенных Халкидонским собором. Следует учесть, что отвергающий этот собор другие Восточные церкви (Малабар, Сирия, Египет) также Евхаристию проводили на квасном хлебе и вине, смешанного с водой, но не принимали учение о двух природах Христа. В диссертации обосновывается, что традиция чаши с цельным вином и нектасным хлебом у армян является настолько древним, насколько древним является развитие традиции смешения воды в бассейне Средиземноморья. Итак, в жизни армянского народа, усвоенные в течение веков ритуальные традиции стали своеобразными проявлениями его самобытности, отказ от которых стал уже бессмысленным.

Внешняя политика патриарха имела взаимодополняющее значение: возможность получения поддержки европейских государств и защита духовной жизни страны от вмешательства католической церкви.

Однако насколько последовательной ни была бы политика армянских светских и религиозных властей, тем не менее, католической церкви в значительной мере удалось распространить свое влияние на царство Киликийского армянского государства и среди духовенства. Более того: если Киликийское царство и патриарх, несмотря на серьезные уступки, так и не объединились с Римом, а всячески старались формально приспособиться к требованиям последнего, то в нескольких регионах Армении (в Нахичеване, Артазе и т. д.) были созданы католические общины, которые не только в догматических, ритуальных вопросах противились армянской церкви, но также разнообразными доносами настраивали против армян папство вообще.

В диссертации обосновывается, что причиной гибели Киликии была политическая «наивность» правящих слоев, согласно которым следование вероучению Запада может помочь посредством внешней военной силы освободить страну от надвигающейся гибели.

СААКЯН ЛИДА ЕГИШЕЕВНА  
РОЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ПОЛИТИЧЕСКОЙ  
ЖИЗНИ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ  
(1292-1375 ГГ.)

РЕЗЮМЕ

Диссертация посвящена истории религиозной и политической деятельности Армянского католикосата Киликии 1292-1375 гг. Выбор хронологических границ диссертации обусловлен одним из самых драматических и внутренне противоречивых периодов истории армянской церкви, когда развиваются армяно-латинские взаимоотношения, определяются позиции армянской церкви в вопросах вероучения в существующей политической реальности. В 1292-1375 гг. оценка событий, происшедших в жизни Армянской Церкви, и выявление их политических и мировоззренческих основ, имеют большое экклезиологическое значение, ибо направлены на всестороннее изучение церковной организации, как одного из факторов обеспечения национального единства. Анализируемые в диссертации основные вопросы, касающиеся внутрицерковных и межцерковных событий, непосредственно связаны с проблемами историко-функционального проявления и развития самобытности, самосознания и духовного склада армянского народа того периода.

Армянское государство Киликии находилось в окружении враждебно настроенных, иноверных государств и, по результатам исследования можно только судить, как ей удалось просуществовать целых три века. На основании беспристрастного анализа первоисточников, и систематизации «Канонов» соборов, а также соотнесения известных в экклезиологии и историографии концепций, в диссертации делается попытка раскрыть истоки и причины формирования основных средств Киликии, в силу чего стало возможным противостоять врагам, прекрасно сознавая, что только мощной армией и воинственным народом невозможно обойтись. Следует отметить, что Армянское государство Киликии всегда нуждалось в союзниках, поэтому стремилось установить хорошие отношения с одним или несколькими соседними государствами с целью устранения других вражеских угроз.

В диссертации особое внимание уделяется определению позиции Киликийского царства и патриархата по отношению к католическому вероучению. В результате изучения истории обосновывается, что светская и духовная власти Армении, казалось, шли к единению, однако они не желали, чтобы их действия стали достоянием широких кругов армянского общества (чуждым всякой политики и дипломатии массам). И, несмотря на то, что церковные соборы (Сиса 1307 г., Аданы 1345 г.), в надежде обеспечить Киликии военную поддержку извне, формально приняли предложения Папы Римского о единении с

архзападных, 1337 р. պայմանագրով նախատեսված Կիլիկիայի տարածքային կորուստների և մի շարք բերդերի քանդման մասին: Օգտվել ենք նաև Գ. Միքայելյանի «История Куликунского армянского государства», Սիրարվի Տեր-Ներսիսյանի «The kingdom of Cilician Armenia», Ա. Ջամինյանի «Հայոց եկեղեցու պատմություն», Ղ. Ալիշանի «Սիսուան», Ս. Վ. Բռնազյանի «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XIII-XIV դդ.», Կ. Բասմաճյանի «Լեւոն Ե Լուսինեան, Վերջին թագաւոր Հայոց», Գ. Ջարրհանյանի «Հայկական հին դպրոցի պատմություն», Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» ուսումնասիրություններից, Ա. Գալստյանի, Ն. եպս. Ծովականի, Դ. Թինյանի և այլոց հոդվածներից:

Միարարական շարժման պատմությանն անդրադառնալիս՝ օգտագործվել են ՍՍ, թիվ 2184, 2180, 1301 ձեռագրերը, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 334 ձեռագիրը, Տ. վրդ. Անապատականի, Դ. Բնեցու, Ա. Դովհաննիսյանի, Դ. Զակարյանի, Կ. Կոստանեացի, Գ. Զովսեփյանի ուսումնասիրություններն ու Լ. Խաչիկյանի, Ս. Ա. Ուղենրիշեյի հոդվածները: Մ. Ա. Ուղենրիշեյը եղել է Դոմոսի Դոմինիկյան միաբանության ուսուցչապետ և գրել է 47 էջանոց պրակ, որը կոչվում է «Հայ Դոմինիկյան մատենագրական ծանոթագրություններ»: Հայ առաքելական եկեղեցուն ուղղված 117 մեղադրանքները ներկայացնելու համար օգտվել ենք Դ. Մանսիի, Ֆ. Թուրմեթիզի, Բակուրանի (Վահան Մ. Քիրքճեան), Լ. Ս. Կոզեանի, Դ. Անասյանի ուսումնասիրություններից, ինչպես նաև Գր. Պետրովիչի, Գ. Տեր-Վարդանյանի և այլոց հոդվածներից: Զննարկվող հարցի վերաբերյալ շատ ուշագրավ տեղեկություններ կան Դ. Անասյանի՝ «Հայոց մոլորական համարված գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի» հոդվածում, որտեղ մանրամասն քննվել են հայ ժողովրդի և եկեղեցու հասցեին հորինված 117 մեղադրանքներն ու արգելված համարվող գրքերը: Նշենք, որ ատենախոսության համար շահեկան են եղել նաև քննարկվող հիմնահարցերի ընդհանրացված արժևորման համարում ունեցող հանրագիտարանային հրատարակություններն ու բառարանները՝ «Քրիստոնյա Հայաստան», «Ամենայն հայոց կաթողիկոսներ», «Հայկական սովետական» հանրագիտարաններն ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների», «Հայերեն արմատական», «Հայոց անձնանունների», «Հայերեն բացատրական» բառարանները:

**Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը:** Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի նիստում: Ատենախոսության առանցքային գաղափարներն ու հիմնադրույթներն արտացոլված են հանրապետության գիտական հանդեսներում և ժողովածուներում նույնպես հոդվածներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է «Ներածությունից», երկու գլխից, «Եզրակացություններից» և «Հավելված» բաժնից: Ենթագլուխների բաժանումը կատարվել է աշխատանքը համակարգված կերպով ներկայացնելու սկզբունքով, ինչի արդյունքում հաջողվել է խուսափել դրանց միջև արհեստական հավասարություն սահմանելուց և կրկնություններից:

**Ատենախոսության բովանդակությունը:** Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության արդիականությունը և գիտական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են օգտագործված աղբյուրները, վերհանվում են մեթոդաբանական սկզբունքներն ու գիտական նորույթը:

Առաջին «Կիլիկիայի հայկական թագավորությունը և հայ եկեղեցին XIII դարի վերջին և XIV դարի սկզբին» գլուխը ստորաբաժանված է երեք ենթագլուխների: «Կրոնաքաղաքական իրադրությունը Կիլիկիայում Ստեփանոս Դոմնկայեցի և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսների օրոք» առաջին ենթագլխում

սկզբնաղբյուրների և վերլուծական գրականության համեմատական ուսումնասիրությամբ ուրվագծվում են Կիլիկյան հայոց պետության պատմության դրամատիկ ժամանակահատվածներից մեկի հասարակական-քաղաքական, հոգևոր պայմանները: Չեթուն II թագավորի գահակալության տարիներին (1289-1306 թթ. ընդհատումներով) Կիլիկիայի հայկական պետությունը սկսում է աստիճանաբար անկում ապրել: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Չոռմի պապն ուժեղացնում է իր ճնշումը Կիլիկիայի հայկական թագավորության և հոգևորականության վրա՝ նպատակ ունենալով հասնել հայ և հռոմեական եկեղեցիների միության: Այդ միջոցով պապը ցանկանում էր Կիլիկիան վերածել Չոռմի պապից վասալական կախվածության մեջ գտնվող իշխանության՝ ի պաշտպանություն արևելքում պապի քաղաքական և տնտեսական շահերի: Ատենախոսության մեջ ներկայացվում են Չեթուն II թագավորի գահակալումը, կաթոլիկ դավանանքն ընդունելն ու նրա վարած քաղաքականությունը, ինչպես նաև նրա օրոք Կոստանդին Բ Կատուկեցի (1286-1289 թթ.) կաթողիկոսին ուղղված մեղադրանքներն ու նրա գահընկեցությունը: Հիմնավորվում է, որ կաթողիկոսներն արտաքին քաղաքականությամբ զբաղվել կարող էին միայն թագավորների հանձնարարությամբ ու համաձայնությամբ, և որ բոլոր տարածայնությունների դեպքում էլ հայոց արքաներին հաջողվում էր իրենց ձեռնառու քաղաքականությունն անցկացնել, իսկ անհնազանդ կաթողիկոսները հեռացվում էին պաշտոններից: Ներկայացվում է նաև Չեթուն II-ի՝ Եվրոպայի հետ **քաղաքական ու դավանական նույնացման ճանապարհներ** որոնելը, և դրա արդյունքում 1292 թ. գումարված ժողովի որոշումը. գատակի տոնը մշել լատինների հետ՝ ապրիլի 6-ին, մինչդեռ հայերը այն պետք է տոնեին ապրիլի 13-ին: Ծռագատակի հաշվով հայերը տարբերվում էին ոչ միայն լատիններից, այլև հույներից, որոնք օգտագործում էին Իրիոնյան տոմարը, մինչդեռ հայերը կիրառում էին Եասյանը:

Անդրադառնալով քաղաքական պատմությանը՝ ներկայացնում են Չոռմկլայի գրավումն ու Ստեփանոս Դ Չոռմկլայեցի կաթողիկոսի և եկեղեցական սրբությունների գերեզմարումը: Ինչպես նաև արձանագրվում են, որ Չոռմկլան, որը 1149/51 թ. մինչև 1292 թ. ընկած ժամանակահատվածում եղել էր տասը կաթողիկոսների պաշտոնական նստավայր, դադարեց հայ եկեղեցու կենտրոնը լինելուց, որից հետո նոր կաթողիկոս Գրիգոր Անավարզեցին (1293-1307 թթ.)՝ արքայի ամենաեռանդուն աջակիցը, կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Սիս:

XIII դարի հայ իրականության մեջ հասարակական կյանքի կարևորագույն երևույթներից մեկը պայքարն էր կաթոլիկության դեմ, որը դարի վերջերին լրջորեն սպառնում էր ոչ միայն հայ եկեղեցու շահերին, այլև սովորույթների ու ծեսերի հարատևմանը: Դավանաբանական պայքարը քողարկվում էր հիմնականում առաջին հայացքից խիստ սխալաստիկ թվացող երկու հարցերի՝ Քրիստոսի բնության և նրա ծննդյան ու մկրտության շուրջը մղվող բանավեճով: Այս հիմնական հարցերից է, որ բխեցվում էին մյուս մասնակի խնդիրները՝ հաղորդության բաժակին ջուր խառնելը, պահոց օրերին ձեթ կամ ձուկ ուտելը և այլն: Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ վերոնշյալը պայքարի միայն արտաքին կողմն էր, իսկ բուն նպատակը՝ հայրապետական աթոռների փոխադարձ հարաբերություն և առավելագույն ազդեցություն ունենալու խնդիրն էր, և որ թե՛ կաթոլիկ և թե՛ օրթոդոքս եկեղեցին հայ ժողովրդի համար օրհասական պահերին օգնության ձեռք մեկնելու պատրվակով միշտ էլ փորձել են լուծել միության խնդիրը: Նշվում է նաև, որ միության խնդիրը հայերը, հույները և լատինները տարբեր կերպ էին հասկանում ու մեկնաբանում: Եթե հայերի համար «միությունը» եկեղեցիների միջև փոխադարձ բարեկամական հարաբերությունն էր՝ համահավասարության սկզբունքով, դավանական համերաշխությունն ու համաձայնությունը, հաղորդակցությունն ու հարգանքը (մեր օրերի էկումենիկ շարժման

ծիսական հարցերում բացարձակ պայքար էին մղում հայ եկեղեցու դեմ, այլև գանազան ամբաստանություններով հայերի դեմ էին զրգռում պապականությանն ընդհանրապես:

11. Կիլիկիայի հայկական պետության հայրապետների զիջումները թերևս արժեք կունենային, եթե հայոց թագավորությունը լատինների օգնական ուժով վտանգից ազատվեր: Սակայն օգնություն այդպես էլ չտեսցվեց: Եթե Չոռմի պապերը իրականում հրաժարվեին իրենց կեղծ խոստումներից, ապա հայերը փրկության այլ ուղիներ կորուցեին:

12. Հայերը չէին կտրում իրենց հույսը Եվրոպայի քրիստոնյա պետություններից՝ նրանցից սպասելով իրենց փրկությունը, բայց և կրոնական խնդիրները կապելով քաղաքական հիմնահարցերի հետ: Մինչդեռ հայտնի էր, որ եթե նույնիսկ կրոնական խնդիրները կատարելապես իրականանային էլ, ապա չէին կարող ակնկալված քաղաքական արդյունքին հասցնել: Գոնե լավ էր, որ հայ եկեղեցին հաստատապես ու պաշտոնապես իր կացությունը չկորցրեց, վերջնականապես Չոռմի դավանաբանական սկզբունքներին չհամակերպվեց ու կաթոլիկ եկեղեցուն չենթարկվեց: Հայ եկեղեցին կարողացավ պահել իր ինքնուրույն կառավարությունը և դավանությունը, թեև չկարողացավ բոլորովին արգելել բարեկարգության թուլություններն ու կարգապահության զեղծումները:

13. Սանրամասն ուսումնասիրությունից հետո ավելորդ է դառնում այն պնդումը, թե իբր Կիլիկիո արքունիքն ու կաթողիկոսարանը ընդունած են եղել Չոռմեական եկեղեցու գերագահությունն ու կաթոլիկ դավանաբանությամբ կապված եղել Չոռմին: Նման տեսակետն արդեն ժամանակավրեպ է, և տեղ չպետք է ունենա ոչ հայ և ոչ էլ օտար գիտական ու հոգևոր շրջանակներում:

14. Գրեթե երեքդարյա պետական, ազգային-մշակութային, կրոնական կյանքի ու գործի պատմություն ունեցող Կիլիկիան այսօր մի քանի հարյուր ձեռագրեր ունի և նույնքան էլ ոսկյա, արծաթե ու պղնձե դրամներ: Սակայն պահպանված հոգևոր ու նյութական մշակույթի և ոչ մի նմուշ չի կարող հաստատել այն չարամիտ վերագրումները, որոնց համաձայն Կիլիկյան իշխանության շրջանը ճանաչվել է իբրև լատինացած ու օտարացած շրջան:

15. Կիլիկիայի կործանման պատճառը քաղաքական «միամտությունն» էր՝ կապված իշխող խավերի կարծիքում տիրող այն մտածելակերպի հետ, թե Արևմուտքի դավանանքը ունենալու դեպքում հնարավոր կլիներ արտաքին զինական ուժի օգնությամբ ազատել երկիրը վերահաս կործանումից: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ Եվրոպական տիրակալները առաջին հերթին քաղաքագետներ էին, և հանուն հայերի չէին պատրաստվում անիրական ռազմարշավների դիմել: Կիլիկիան հայերի՝ սեփական ուժերին չապավինելու հետևանքը եղավ երկրի, թերևս, վաղաժամ կործանումը, որից անմասն ու անպարտ մնաց հայ եկեղեցին, որովհետև նա չուներ «քաղաքական միամտություն», բայց և արեց իրենից պահանջվող ամեն զիջում՝ հանուն պետականության պահպանման:

### **Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Հայ եկեղեցին Կիլիկյան Հայաստանում Չեթուն II-ի օրոք, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Դ, Երևան, 2009, էջ 215-232:

2. Էջեր միարարական շարժման պատմությունից, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Է, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 144-154:

3. Չեթուն Բ թագավորին Գրիգոր Անավարզեցու հղած նամակի վերլուծության փորձ, Բանբեր Երևանի համալսարանի, 139.1, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 29-40:

4. Սսի 1345 թ. եկեղեցական ժողովը, Հայ աստվածաբան, Ե, /գիտական հոդվածների ժողովածու/, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 50-64:



աշխատությունը, հնարավորություն է ընձեռում ապացուցել, որ 1306 թ. գրված և Չեթուն Բ թագավորին հղված նամակի հեղինակը Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսն է:

5. Գրիգոր Անավարզեցու թղթի քննական վերլուծությամբ կարելի դարձավ արձանագրել, որ թղթում առկա էին ստույգ վկայություններ, բայց և որոշ չափազանցություններ (եկեղեցական բանադրանքին վերաբերող), ինչպես նաև տեղեկություններ, որոնք չէին վերաբերում ջրի խորհրդին, և բացատրություններն էլ բռնազբոսիկ էին, ուստի ինքնին մատնանշում էին այլ մեկնաբանություններ: Արդյո՞ք Գրիգոր Անավարզեցին չէր գիտակցում ջրախառնության և Քրիստոսի երկու բնությունների միջև եղած կապը: Կարծում ենք, որ ըստ Անավարզեցու, ջրախառնության ընդունումը դեռևս չէր նշանակելու Քաղկեդոնի ժողովի սահմանած վարդապետության անուղղակի ընդունում, հաշվի առնելով այն, որ այդ ժողովը մերժող Արևելյան մյուս եկեղեցիները (մալաբար, ասորի, ղպտի) պատարագը կատարում էին թթմոր հացով ու ջրախառն գինով, սակայն չէին ընդունում երկու բնությունների վարդապետությունը:

6. Գիշտ է, Կիլիկիայի արքունիքը և կաթողիկոսարանը եկեղեցա-կրոնական զիջումների էին գնում քաղաքական ակնկալիքներով և փորձում էին հասնել քաղաքական նպատակների իրականացման, այն է՝ Եվրոպայից ռազմական օգնություն ստանալ, սակայն, ինչպես ցույց տվեց պատմության ընթացքը, դրանք քաղաքական «անիրական» նպատակներ էին:

7. Հայ հոգևոր և աշխարհիկ ղեկավարները թեև առերես գնում էին միության, սակայն նրանք չէին ցանկանում, որ իրենց քայլերը Կիլիկյան հայ հասարակության լայն շրջանակների (քաղաքականությունից և դիվանագիտությունից հեռու կանգնած զանգվածների) սեփականությունը դառնան: Ու թեև եկեղեցական ժողովները (1307 թ. Սսի, 1316 թ. Ադանայի, 1345 թ. Սսի) Եվրոպայից ռազմական օգնություն ստանալու հույսով, ձևականորեն, ընդունեցին կաթոլիկ եկեղեցու հետ միանալու հռոմի պապի առաջարկները, սակայն ակնկալած օգնությունը չստանալու պատճառով, ինչպես նաև բուն Հայաստանի հոգևորականության դիմադրության շնորհիվ, դրանք չիրագործվեցին:

8. Արևելյան վարդապետներն առիթը բաց չէին թողնում սուր քննադատության ենթարկելու Կիլիկիայի հայ բարձրաստիճան հոգևորականությանը, ինչը խոսում է այն մասին, որ նրանք պարզապես անտեղյակ էին կամ լավ չէին պատկերացնում իրավիճակն ու քաղաքական երկխոսությունները:

9. Հռոմեական եկեղեցու հետ մի արտաքին միություն առաջացնելու ձգտումը, որը ծիսական զիջողություններով էր կատարվում, հանգեցրեց նաև հայ եկեղեցու ներքին բաժանման: Կաթողիկոսի և թագավորի վարած քաղաքականության և առաջ քաշած նորամուծությունների դեմ հանդես եկավ Երուսաղեմի հայոց եպիսկոպոսություն-պատրիարքությունը: 1311 թ. Երուսաղեմի հայոց Սարգիս պատրիարքը բուրդովին խզեց եկեղեցական ներքին հարաբերությունները հայոց կաթողիկոսության հետ, ինչը նվազեցրեց Սայր աթոռի հեղինակությունը:

10. Կաթողիկոսարանի արտաքին քաղաքականությունը փոխլրացնող բնույթ էր կրում. այն ուղղված էր Եվրոպական երկրներից օժանդակություն ստանալուն և հնարավորի սահմաններում երկրի հոգևոր կյանքը կաթոլիկ եկեղեցու անմիջական միջամտությունից զերծ պահելուն: Սակայն որքան էլ հետևողական էր հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքականությունն այդ հարցում, այնուամենայնիվ կաթոլիկ եկեղեցուն նշանակալի չափով հաջողվեց իր ազդեցությունը տարածել Կիլիկիայի հայոց պետության արքունիքում և հոգևորականության բարձր շրջաններում: Ավելին, եթե Կիլիկիայում արքունիքը և կաթողիկոսը, չնայած լուրջ զիջումներին, այդպես էլ չմիացան հռոմին, այլ մինչև վերջ աշխատեցին ձևականորեն հարմարվել վերջինիս պահանջներին, ապա Հայաստանի մի շարք շրջաններում՝ Նախիջևանում, Արտագում և այլուր ստեղծվեցին կաթոլիկական համայնքներ, որոնք ոչ միայն դավանաբանական,

օրինակով), ապա հույներն ու լատինները այն պատկերացնում էին միայն հայ առաքելական եկեղեցին իրենց ենթարկելու ձևով:

Ներկայացնելով նախորդ ուսումնասիրողների տեսակետները, Մխիթար Ապարանեցու «Գիրք տրամաբանության ուղղափառաց ըստ կաթոլիկ սուրբ եկեղեցու և ընդդեմ հերձուածողաց» ձեռագրի հիման վրա նշվում է, որ Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսը հեղինակ է չափածո ստեղծագործությունների և արձակ երկերի՝ Հայսմավուրք, Ներբողյաններ և Նամականի:

Սկզբնաղբյուրների համադրության, հակասական տեսակետների քննարկման արդյունքում և, մասնավորապես, Մխիթար Ապարանեցու աշխատության մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում որոշվում է Չեթուն II թագավորին հղված նամակի ստույգ թվականը, ինչպես նաև ապացուցվում է, որ նամակի հեղինակը Գրիգոր է Անավարզեցին է:

Ատենախոսության մեջ անհերքելի է համարվում այն փաստը, որ Գրիգոր Անավարզեցին, ձգտելով ունենալ թագավորական իշխանության աջակցությունը, հաճախ հանդես է եկել հեղիեղուկ քաղաքականությամբ. Սմբատին պատկերելով, Կոստանդինին ընդունելը և իրեն հարազատ Չեթունին լքելը: Այդուհանդերձ Գրիգոր Անավարզեցին գնահատվում է իբրև ժամանակի հասարակական-քաղաքական նշանավոր դեմքերից մեկը, որի ավանդը մեծ է Կիլիկիայի հայկական պետության դիվանագիտության զարգացման ասպարեզում: Նա նաև հայ երգարվեստի կիլիկյան դպրոցի երևելի մշակներից էր, ով հորինել է բազմաթիվ գանձեր ու տաղեր, տարբեր տոների նվիրված շարականներ ու այլ բնույթի ստեղծագործություններ: Իսկ նրա թողած գրական-մատենագրական հարուստ և արժեքավոր ժառանգությունը մեր միջնադարյան մշակույթի անբաժան մասն է կազմում:

**«Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի նամակը և Սսի 1307 թվականի եկեղեցական ժողովը»** երկրորդ ենթագլխում ներկայացված են հրապարակում եղած ուսումնասիրությունները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են Գրիգոր է Անավարզեցու նամակին և 1307 թ. Սսի եկեղեցական ժողովին, որտեղ քննարկվել են նոր հայրապետի ընտրության, կաթոլիկ և հայ եկեղեցիների միության՝ Ունիայի հարցերը և Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսի (արդեն վախճանված) առաջարկած ծիսափոխությունները: Կիլիկիայի արքունիքը և կաթողիկոսարանը եկեղեցա-կրոնական զիջումների էին գնում քաղաքական ակնկալությունների հույսով և փորձում էին հասնել քաղաքական նպատակների իրականացման, այն է՝ ընդառաջ գնալով Կղեմես V-ի պահանջին՝ Եվրոպայից ռազմական օգնություն ստանալ: Ժողովի որոշումները հավանության են արժանանում հռոմի պապի կողմից: Սակայն հետագայում նրան հիասթափություն էր սպասվում. Սսի ժողովի որոշումները ոչ միայն տարածում չգտան, այլև այն եկեղեցականները, ովքեր մասնակցել էին ժողովին, ոչինչ չձեռնարկեցին որոշումներն իրականացնելու համար:

Ներկայացվում են ժողովի քաղաքական բնույթը և հետևանքները, ինչպես նաև առաջին անգամ տրվում է Չեթուն Բ թագավորին հղած նամակի բովանդակության մանրամասն վերլուծությունը: Սսի Սահմանադրության և Գրիգոր Անավարզեցու թղթի քննական վերլուծությունից հետո արձանագրվում է, որ թղթում առկա էին ստույգ վկայություններ, բայց և որոշ չափազանցություններ (եկեղեցական բանադրանքին վերաբերող), ինչպես նաև կային վկայություններ (եկեղեցական բանադրանքին չափազանցությունները), ինչպես նաև կային վկայություններ, որոնք չէին վերաբերում ջրի խորհրդին, և բացատրություններն էլ բռնազբոսիկ էին. ինքնին մատնանշում էին այլ մեկնաբանություններ: Արդյո՞ք Գրիգոր Անավարզեցին չէր գիտակցում ջրախառնության և Քրիստոսի երկու բնությունների միջև եղած կապը: Երևի, ըստ Անավարզեցու, ջրախառնության ընդունումը դեռևս չէր նշանակելու Քաղկեդոնի ժողովի սահմանած վարդապետության անուղղակի ընդունումը, հաշվի առնելով այն, որ այդ ժողովը մերժող Արևելյան մյուս եկեղեցիները (Մալաբար, Ասորի, Ղպտի) պատարագը

կատարում էին թթմնոր հացով ու ջրախառն գինով, սակայն չէին ընդունում երկու բնությունների վարդապետությունը: Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ անապակ բաժակի և անխմոր հացի սովորությունները հայերի մոտ նույնքան հին են, որքան հին Սիջերկրականի սովազանում զարգացած ջրախառն բաժակի սովանդությունը: Ուստի, դարերի ընթացքում մշակված ծիսական ավանդությունները հայ ժողովրդի կյանքում վերածվել էին ինքնության յուրօրինակ բաղադրիչների, որոնցից հրաժարվելն արդեն իսկ անհնաստ էր դարձել:

**«Կիլիկյան հայոց թագավորության կրոնական և քաղաքական իրադրությունը 1307-1320 թվականներին»** երրորդ ենթագլխում ներկայացվում է Կիլիկիայի հայոց պետականության քաղաքական ծանր վիճակը, որը պայմանավորված էր մի քանի գործոններով՝ իլխանության հզորության անկում, եգիպտական և կարամանյան պետությունների հզորացում, ինչպես նաև Կիլիկյան դիվանագիտության ձայնողուններ: Ներկայացվում է 1308 թ. Ադանայի հրապարակային բողոք-ցույցը, 1309 թ. Ադանայում տեղի ունեցած ժողովը, որի նպատակն էր ժողովականներին ստիպել ընդունելու 1307 թ. Սսի եկեղեցական ժողովի որոշումները: Սսի 1309 թ. ժողովում եպիսկոպոսներն ու վարդապետները մերժեցին 1307 թ. Սսի ժողովի որոշումները՝ մասնավորապես դեմ հանդես գալով երեք գլխավոր փոփոխությունների առաջարկներին. 1. Ս. հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելուն, 2. Տերունի և Սրբոց տոները, լատինական սովորության համաձայն, հաստատուն ամսաթվերով կատարելուն, 3. Երկու բնության բանաձևը ընդունելուն: Հարկ է նշել, որ Սսի հինգերորդ՝ 1307 թ. ժողովի միութենական որոշումները հերքելու ուղղությամբ հայադավան ներկայացուցիչների թափած ջանքերը վավերական բնույթ չստացան:

Ատենախոսության մեջ փաստվում է, որ հռոմեական եկեղեցու հետ մի արտաքին միություն առաջացնելու ձգտումը, որը ծիսական զիջողություններով էր կատարվում, հանգեցրեց հայ եկեղեցու ներքին բաժանման: Կաթողիկոսի և թագավորի վարած քաղաքականության և առաջ քաշած նորամուծությունների դեմ հանդես եկավ Երուսաղեմի հայոց եպիսկոպոսություն-պատրարքությունը: 1311 թ. Երուսաղեմի հայոց Սարգիս պատրիարքը եկեղեցական ներքին հարաբերությունները բոլորովին խզեց հայոց կաթողիկոսության հետ, որը, բնական է, նվազեցրեց Մայր աթոռի հեղինակությունը: Ներկայացվում է 1316 թ. Ադանայի ժողովը, որտեղ նշվում է, որ թեև ժողովի մանրամասները գտել է Կղեմես Գալանոսի բնագրում, սակայն, ոչ մի տարբերություն չգտնելով Սսի 1307 թ. որոշումներից, չկրկնվելու համար պարզապես արձանագրում է, որ այնտեղ քննարկվեցին Անավարզեցու՝ Լևոնին հղած կտակի մեջ եղած առաջարկությունները, մասնավորապես՝ բաժակին ջուր խառնելու, Հռոմի հետ ունիա կազմելու հարցերը, և բռնի ուժով վերահաստատեցին դրանք: Քննության է առնվում Արևելյան վարդապետների՝ Սսի ժողովի միութենական որոշումների դեմ կազմված երկրորդ համախոսական նամակը:

Ատենախոսության մեջ մեծապես կարևորվել է կաթոլիկության նկատմամբ Կիլիկիայի արքունիքի և կաթողիկոսարանի դիրքորոշումը: Պատմության ուսումնասիրությունից հետո հիմնավորվում է, որ հայ հոգևոր և աշխարհիկ ղեկավարները թեև առերես գնում էին միության, սակայն նրանք չէին ցանկանում, որ իրենց քայլերը Կիլիկյան հայ հասարակության լայն շրջանակների (քաղաքականությունից և դիվանագիտությունից հեռու կանգնած զանգվածների) սեփականությունը դառնար: Ու թեև եկեղեցական ժողովները (1307 թ. Սսի, 1316 թ. Ադանայի, 1345 թ. Սսի) Եվրոպայից ռազմական օգնություն ստանալու հույսով, ձևականորեն, ընդունեցին կաթոլիկ եկեղեցու հետ միանալու Հռոմի պապի առաջարկները, սակայն ակնկալված օգնությունը չստանալու պատճառով, ինչպես նաև բուն Հայաստանի հոգևորականության դիմադրության շնորհիվ կյանքի չկոչվեցին:

թագավորության գերիշխան դիրքը եկեղեցու նկատմամբ իր արտահայտությունը գտավ ինչպես երկրի ներքին կառավարման, այնպես էլ արտաքին դիվանագիտության հարցերում: Բնական է, Կիլիկիայի հայկական պետության պատմությունը լի էր փաստերով, երբ պետությունը, ելնելով թելադրող իրականությունից, սահմանափակում էր եկեղեցու կամ կաթողիկոսի իրավունքները, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում քայլեր ձեռնարկում՝ մոտենալու ո՛չ միայն քրիստոնեական այս կամ այն խմբավորմանը, այլև մոնղոլներին կամ մահմեդական իշխանություններին:

Այդ ամենն էլ հիմք են տալիս եզրակացնելու, որ կրոնական խնդիրները կապված էին քաղաքական հիմնահարցերի հետ: Կրոնական խնդիրները քաղաքական հիմնահարցերի լուծման անհրաժեշտ պայմաններ էին ցույց տալիս, մինչդեռ հայտնի էր, որ եթե նույնիսկ կրոնական խնդիրները կատարելապես իրականանային էլ, ապա չէին կարող ակնկալված քաղաքական արդյունքին հասցնել: Միայն թե հայ եկեղեցին հաստատապես ու պաշտոնապես իր կացությունը չկորցրեց, և վերջնականապես Հռոմի դավանաբանական սկզբունքներին չհամակերպվեց ու կաթոլիկ եկեղեցուն չենթարկվեց: Հայ եկեղեցին կարողացավ պահել իր ինքնուրույն կառավարությունը և դավանությունը, թեև չկարողացավ բոլորովին արգելել բարեկարգության թուլություններն ու կարգապահության զեղծումները: Հաշվի առնելով, որ XIV դ. սկզբներից հազարամյա հայ եկեղեցին բոլորովին նպատակ չուներ իր «ինքնագլուխ» վիճակը, ուրույն դիմագիծը և սեփական շահը կորցնելու, արձանագրվում է, որ նա գնացել է նման դավանաբանական ու ծիսական զիջումների ոչ թե պարտադրված, այլ միանգամայն գիտակցաբար՝ համուն հայ ժողովրդի պետական շահերի:

Ատենախոսությունն ունի մեկ հավելված, որում տրված են սկզբնաղբյուրային կարևորություն ունեցող էջեր Մխիթար Ապարաներցու (Գիրք տրամաբանութեան ուղղափառաց ըստ կաթոլիկ սուրբ եկեղեցու և ընդդեմ հերձուածողաց, ձեռագիր № 334) ինքնագիր ձեռագրից:

**Եզրակացություններ:** «Հայ եկեղեցու դերը Կիլիկյան Հայաստանի քաղաքական կյանքում (1292-1375 թթ.)» աշխատության համալիր ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Կաթողիկոսները Կիլիկիայի հայոց պետության մեջ արտաքին քաղաքականությամբ կարող էին զբաղվել միայն թագավորների հանձնարարությամբ ու համաձայնությամբ, և որ բոլոր տարածայնությունների դեպքում էլ հայոց արքաներին հաջողվում էր իրենց կամային որոշումներն անցկացնել, իսկ անհնազանդ հայրապետները հեռացվում էին պաշտոններից:

2. Կիլիկիայի հայոց թագավորությունում տիրող քաղաքական խժժությունների ժամանակ կաթողիկոսները, դրսևորելով քաղաքական գործի մեծ ունակություններ, կարողացել են հաջողությամբ մանևրել՝ միաժամանակ սատարելով և՛ գահին նստող յուրաքանչյուր արքային, և՛ պահպանելով չեզոքություն:

3. XIII դ. 90-ական թթ. մինչև 1375 թ. Կիլիկիայի հայ իրականության մեջ հասարակական կյանքի կարևորագույն երևույթներից մեկը դավանաբանական պայքարն էր կաթոլիկության դեմ, որը դարի վերջերին լրջորեն սպառնում էր ոչ միայն հայ եկեղեցու շահերին, այլև ժողովրդական սովորությունների ու ծեսերի հարատևմանը: Սակայն վերոնշյալ դավանաբանական պայքարը միայն արտաքին կողմն էր, իսկ բուն նպատակը հայրապետական աթոռների փոխադարձ հարաբերությունն ու առավելագույն ազդեցություն ունենալու խնդիրն էր: Քանի որ թե՛ կաթոլիկ և թե՛ օրթոդոքս եկեղեցին հայ ժողովրդի համար օրհասական պահերին, օգնության ձեռք մեկնելու դիմաց, միշտ էլ փորձել են օգտվել այդ վիճակից և իրենց օգտինլուծել միության խնդիրը:

4. Մխիթարյան Միաբանության № 334 ձեռագիրը՝ Մխիթար Ապարաներցու «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց ըստ կաթոլիկ սուրբ եկեղեցու և ընդդեմ հերձուածողաց»

ժողովների եկեղեցական միության վերաբերյալ որոշումները, դատապարտեցին Հոմի պապի վարքագիծը: Նշվում է, որ Սսի ութերորդ ժողովի ուշադրության առարկան ևս հաղորդության բաժանն է եղել, որ միայն ջրախառնության հարցը չէ որ հերքված կարող էր լինել, հերքվեցին բոլոր այն կետերը, որոնք Գրիգոր Անապարզեցու նամակով և Սսի ու Ադանայի միութենական ժողովներով ներմուծվել էին հայոց եկեղեցական ավանդության մեջ: Մյուս կողմից անհավանական չի համարվում, որ ինչպես նախորդ ժողովներում, խնդրո հիմնական առարկան եղել է ջրախառնության հարցը:

Փաստվում է, որ ժողովի որոշմամբ վերջնականապես ծախսվեցին հայերին կաթոլիկացնելու պատերի փորձերը: Այս քայլը հարկադիր բնույթ էր կրում, արտաքին քաղաքական ուղղության փոփոխություն էր, որը, սակայն, արդեն եական ոչինչ չէր կարող տալ ստեղծված քաղաքական բարդ պայմաններում: Ատենախոսության մեջ ներկայացվում է մանուքների կողմից Սսի գրավումն ու Կիլիկիայի հայոց թագավորության կործանումը և նշվում, որ Կիլիկիայի հայկական պետության գոյության վերջին տարիների պատմությունը ցույց տվեց, որ Կիլիկիան անկարող գտնվեց ապահովել երկրի պաշտպանությունը, քանի որ համաժողովրդական պատերազմը կազմակերպված չէր, իսկ որոշ անձանց քաջագործությունները (Լիպարիտ, Շեթուն, Ջարմուխի) չէր կարող երկիրը փրկել ընդհանուր անկումից: Կիլիկյան թագավորությունը կործանվեց, քանի որ հայտնվել էր մահմեդական թշնամի պետությունների օղակում: Արևմուտքից կարամանցի թուրքմենները, հյուսիս-արևելքից թաթարները, հարավ-արևելքից Եգիպտոսի մանուքները անընդհատ հարձակվում էին երկրի վրա: Հարավում Միջերկրականի ծովահեններն էին խոչընդոտում Կիլիկիայի առևտրին ու հաղորդակցությանը: Նման ծանր իրավիճակում հայտնված երկրին անհրաժեշտ էր ամբողջությամբ համախմբել ներքին ուժերը և փորձել հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ: Սակայն հայոց թագավորները, սեփական ուժի վրա հենվելու փոխարեն, իրենց հույսը դրեցին Արևմուտքի օգնության վրա, որով ավելի գրգռեցին հարևաններին, իսկ եկեղեցիների միության հարցը առաջ քաշելով՝ պառակտեցին Կիլիկիայի ներքին ուժերը: Նման պայմաններում հայոց թագավորությունը, բնականաբար, չէր կարող երկար գոյատևել:

Հիմնավորվում է, որ Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական և քաղաքական միտքն առաջին իշխանական տների հաստատումից մինչև թագավորության անկումը սերտորեն կապված է եղել միջնադարի ամենաառանցքային հարցերից մեկի՝ դավանաբանության հետ: Իշխող հոգևոր ու աշխարհիկ տերերի համար դիվանագիտությունը և հոգևոր ոլորտի խնդիրները միախլուսված էին: Դրանով էր պայմանավորված դավանաբանական հարցերում նրանց դիվանագիտական «զիջումներն» Արևմուտքին, որի գերնպատակը պետականության գոյության ապահովումն էր:

Փաստվում է, որ պատմագիտության մեջ, ըստ ամենայնի, չի գնահատվել Կիլիկյան թագավորների ու կաթոլիկոսների հեռատես քաղաքականությունը, որի հետևանքով երբեմն անիրավացի տարակուսանք է հայտնվել նրանց ձեռնարկած միջոցառումների անհրաժեշտության վերաբերյալ, մինչդեռ, այն ունեցել է շատ հիմնավոր պատճառներ և կարևոր նշանակություն հայկական Կիլիկիայի պատմության ողջ ընթացքի համար: Խնդիրն այն է, որ խաչակրաց իշխանությունների գոյության փաստը Կիլիկիայի շրջակայքում և մանավանդ նոր սպասվող խաչակրաց արշավանքները, բնականաբար, պետք է ուժեղացնեին կաթոլիկ եկեղեցու դիրքերը արևելքում. սակայն կաթոլիկության տարածումը, ինչպես Հայաստանում, այնպես էլ Կիլիկյան հայկական թագավորությունում, պատմական և իրավական հիմքեր չունեն, քանզի հայ իրականության մեջ աշխարհիկ իշխանությունը, քրիստոնեությունն ընդունելիս, հենվում էր հայկական պետության դարավոր ավանդույթների վրա և անկախ էր իր ինչպես նախորդ, այնպես էլ նոր կրոնի ժամանակ, և, ըստ էության, կրոնը ծառայեցնում էր իր շահերին: Ինքնին հասկանալի պատճառներով Կիլիկյան

Երկրորդ գլուխը՝ «**Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները Կիլիկյան հայկական թագավորության անկման շրջանում**» վերնագրով, ստորաբաժանված է չորս ենթագլուխների: Առաջին «**Կիլիկիայի հայոց պետության ներքին ու արտաքին կրոնաքաղաքական իրավիճակը 1320-1323 թթ.**» ենթագլխում ներկայացվում է Կիլիկիայում տեղի ունեցող ներքին խնդրումներն ու արտաքին վտանգը, որն արդեն սպառնալի չափեր էր ընդունել: Ներկայացվում է Լևոն V նամակը՝ ուղղված Յովհաննես XXII պապին՝ օգնություն ցույց տալու խնդրանքով: Արձանագրվում է, որ հայկական զորքերը պարտությունից պարտության էին մատնվում անհավասար պայքարում, իսկ դիմումներն էլ Արևմուտք ոչ մի օգուտ չէին բերում, բացի նրանից, որ նրանք ավելի ևս սրում էին հայերի և նրանց հարևանների փոխհարաբերությունները: Արդյունքում Եգիպտոսի սուլթանը հարձակվեց և գրավեց Այսո նավահանգիստը: Մինչդեռ Այսոսից ստացված եկամուտներով Կիլիկիան կարողանում էր ոչ միայն վճարել հայ-եգիպտական նախորդ հաշտության պայմանագրերից բխող տարեկան հարկը, այլև վերազինել բանակը: Բացի այդ, Այսո մրցակից էր հանդիսանում Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի համար, և վնասում էր ինչպես նրա, այնպես էլ Դամիետ նավահանգիստների առևտրական գործունեությանը:

Ենթագլխում մեծ տեղ է հատկացվել նաև 1323 թ. Լևոն V-ի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրին: Պայմանագրի պայմանները մանրամասնելուց հետո նշվում է, որ թեև հաշտության դաշինքը իր էությամբ շատ ծանր էր, բայց տանելի կլիներ, եթե հնարավոր լիներ վերականգնել երկրի ներքին համերաշխությունը, սակայն, ինչպես ցույց տվեց պատմության ընթացքը, Լևոն V-ի անհեռատես քաղաքականության հետևանքով դա տեղի չունեցավ:

Քննվում են Կոստանդին Կատուկեցի (Պրոնգործ) և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսների վերաբերյալ որոշ տեսակետներ: Ելակետ է հանդիսանում Մաշտոցի անվան մատենադարանում պահվող «Թուղթ Եսայեայ վարդապետին, պատասխանի թղթոյ Սոյ կաթողիկոսին և թագաւորին» խորագրով № 9622 ձեռագիրը, համաձայն որի Կոստանդին Կատուկեցին և Կոստանդին Կեսարացին նույնն են: Աշխատության այս մասում ներկայացվում է նաև Կոստանդին Դ Լամբրոնացի (1323-1326 թթ.) կաթողիկոսի օրոք Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական բարդ իրավիճակը. հարևան մահմեդականները սպառնում էին Կիլիկիո հայոց թագավորության գոյությանը, և հայ հասարակական-քաղաքական շրջանակները աշխատում էին եկեղեցիների միավորման ճանապարհով քրիստոնյա երկրներից ռազմաքաղաքական օգնություն ստանալ: Հաշվի առնելով իր նախորդի վարած քաղաքականությունը՝ Կոստանդին Դ Լամբրոնացին նույնպես Հոմի հետ հարաբերություններին դրական է վերաբերվել, սակայն շուտով հասկացել է, որ պապի հետ առնչություններն ավելի շատ վնասներ են պատճառում, քան օգուտ բերում, ուստի խնամակալ Օշին պայլի՝ կաթոլիկների հետ վարած թղթակցություններին չի մասնակցել՝ գրավելով չեզոք դիրք: Հեղինակն արձանագրում է, որ Կոստանդին Դ Լամբրոնացին, չնայած իր կարծատև գահակալությանը, մեծ դեր է կատարել Կիլիկյան Հայաստանի կյանքում: Նրա դիվանագիտական հեռատես գործունեության արդյունքում ամրապնդվեց Կիլիկիայի միջազգային հեղինակությունը և բարձրացավ նրա դերը Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական կյանքում:

Երկրորդ «**Միարարական շարժման ձևավորումն ու ծավալումը**» ենթագլխում Մխիթար Ապարանեցու աշխատության հենքի վրա ներկայացված են Յովհաննես Քոնեցու՝ Մարաղայում ծավալած գործունեության, Երնջակի շրջան տեղափոխվելու, Քոնայի դպրոցի հիմնադրության և հարակից դեպքերի մասին մանրամասն տեղեկություններ: Քննության է առնվում այն վարկածը, համաձայն որի՝ Յովհաննես Քոնեցին իբր Մարաղա է մեկնել Եսայի Նչեցու հանձնարարականով, և որ վերջինս ցանկություն է ունեցել, նույնիսկ, Բարդուղիմեոսին հրավիրել Գլածոր: Հիմնվելով «Թուղթ Յոհանու վարդապետին Քոնեցույ առ միաբանեալ եղբարսն հայոց»

գրության վրա՝ փաստարկվում է, որ Եսայի Նչեցին որևէ առնչություն չի ունեցել Յովհաննես Քոնեցու և Բարդուղիմեոսի մերձեցման հետ:

Ենթադրվում մեծ տեղ է հատկացվել դոմինիկյան և ֆրանցիսկյան միաբանների բազմաբնույթ գործունեությանը ոչ միայն Կիլիկյան հայոց պետությունում, այլև բուն Հայաստանում: Ներկայացվում է կրոնական խառնաշփոթի արդյունքում առաջացած ժողովրդական երեք խմբերը. Ա. Հայրենի եկեղեցու նախանախնդիրներ՝ մերժում էին թե՛ Հռոմի եկեղեցու վարդապետությունը, ծեսերն ու արարողությունները, թե՛ պապի գլխավորությունը, թե՛ Սսի ու Աղանայի ժողովների կանոնները, և թե՛ Սսի կաթողիկոսարանի անառարկելի հեղինակությունը: Սսեցիները իրենց տեղական բարբառով նրանց անվանում էին սոմթ (հերձվածող, հերետիկոս): Բ. Սսի միաբաններ, որոնք ճանաչում էին Սսի Ես Աղանայի ժողովների կանոնները, և որոնք կոչվում էին բաժանված կամ պայմանավոր հայեր: Գ. Ունիթորներ, որոնք ընդունում էին պապի գերագահությունը, և հայերը նրանց անվանում էին աղթարմայ, որ գրեթե նույնանիշ է կախարդ բառին: Նշվում է, որ Սյունյաց հոգևորականները, հատկապես Գլածորի և Տաթևի համալսարանների ուսուցչապետներն ու վարդապետները (Եսայի Նչեցի, Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Արզիս Մեծ, Վարդան վարդապետ և այլք) անգիջում պայքար են ծավալել Երնջակի շրջանում բուն դրած ունիթորների դեմ:

Յույց է տրվում, որ արքունիքի և կաթողիկոսարանի արտաքին քաղաքականությունը փոխլրացմող բնույթ էր կրում. այն ուղղված էր եվրոպական երկրներից օժանդակության ստացմանը և հնարավորի սահմաններում երկրի հոգևոր կյանքը կաթոլիկ եկեղեցու անմիջական միջամտությունից զերծ պահելուն: Սակայն որքան էլ հետևողական էր հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքականությունն այդ հարցում, այնուամենայնիվ կաթոլիկ եկեղեցուն նշանակալի չափով հաջողվեց իր ազդեցությունը տարածել Կիլիկիայում Հայաստանի արքունիքում և հոգևորականության որոշ շրջաններում: Ավելին, եթե Կիլիկիայում արքունիքը և կաթողիկոսը, չնայած լուրջ զիջումներին, այդպես էլ չմիացան Հռոմի եկեղեցուն, այլ մինչև վերջ աշխատեցին ձևականորեն հարմարվել վերջինիս պահանջներին, ապա Հայաստանի մի շարք շրջաններում՝ Նախիջևանում, Արտազում և այլուր ստեղծվեցին կաթոլիկական համայնքներ, որոնք ոչ միայն դավանաբանական, ծիսական հարցերում բացարձակ պայքար էին մղում հայ եկեղեցու դեմ, այլև զանազան ամբաստանություններով հայերի դեմ էին գրգռում արևմտյան եկեղեցուն ընդհանրապես:

Ատենախոսության մեջ ներկայացվում է նաև երեք տարի անընդմեջ շարունակվող հարձակումներից հետո՝ 1337 թ., կնքված հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը, համաձայն որի՝ Լևոն թագավորը Եգիպտոսի սուլթանությանը զիջեց Այաս նավահանգիստը, Սև լեռներից և Ջահան գետից հարավ-արևելք ընկած տարածքները: Նա ստիպված եղավ Ավետարանով երդվել, որ Ֆրանսիայի թագավորի ու պապի հետ հարաբերություններ չի ունենա: Բացի տարածքային զիջումներից, հաշտության պայմանագրով Լևոնը պարտավորվում էր վճարել պատերազմի ընթացքում Կիլիկիայից վտարված մահմեդական առևտրականների կրած կորուստները: Փոխարենը Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը պարտավորվեց իր զորքերը հետ քաշել Կիլիկիայի սահմաններից:

Երրորդ՝ «**Մխիթար Գռնեցիի կաթողիկոսը և Սսի 1345 թ. եկեղեցական ժողովը**» ենթագլխում ներկայացվում են նորոժյալ Մխիթար կաթողիկոսի և արքայի ղեկավարած հարաբերությունները Ալիմիոնի հետ: Նշվում է, որ Լևոն թագավորը 1341 թ. սկզբին Բենեդիկտոս XII պապի մոտ էր ուղարկել Սսի Մայր տաճարի քարոզիչ միմոդիտ Դանիել Թավրիզեցուն և ասպետ Թորոս Միքայելեցուն, որոնք ներկայացրել էին թագավորի ու կաթողիկոսի խնդրագիր նամակը: Իսկ արդեն նրա հաջորդ Կղեմես VI պապը 1341 թ. օգոստոսի 1-ին Լևոն V թագավորին ու կաթողիկոսին գրել էր, որ նրանք եկեղեցական ժողով հրավիրեն, որտեղ հատուկ արձանագրությամբ պետք է ճանաչեին

հռոմեական եկեղեցու առաջնությունը: Պատասխան մամակի հետ միասին Դանիելն ու Թորոսը բերել էին պապական արքունիքում գտնվող հայ միարարների կազմած «Հայոց եկեղեցու մոլորությունը» կամ «Libellus» անունով հայտնի այն փաստաթուղթը, որը պարունակում էր հայոց եկեղեցուն վերագրվող 117 «մոլորություններ», որոնք առաջարկված էր դատապարտել հատուկ այդ նպատակով գումարվելիք եկեղեցաժողովում: Բենեդիկտոս պապը, հասկանալով, որ խաչակրաց շարժումը որոշակիորեն անկում է ապրում, փորձում էր, իբր կրոնական խնդիրների պատճառով, հրաժարվել հայերին ռազմական օգնություն տրամադրելուց, այսինքն պապի պահանջը ընդամենը օգնությունից խուսափելու փորձված միջոց էր:

Ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվում նախորդ ուսումնասիրողների տեսակետներին և նշվում, որ թեև մինչ այժմ եղած սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել այն մասին, թե ստույգ երբ է տեղի ունեցել այդ կարևոր եկեղեցական ժողովը, այնուամենայնիվ առավել հավանական է համարվում, որ ժողովը տեղի է ունեցել հենց 1345 թվականին, ի դեպ՝ հետևելով ուսումնասիրողների մեծամասնության: Եղած գիտական ուսումնասիրությունների քննության արդյունքում հստակեցվում են ծիսադավանական տարբերությունները և պարզաբանվում «117 մոլորությունները»: Առավել մանրամասն ներկայացվել է 110-րդ «մոլորությունը», որը վերաբերում է «մոլորական» համարվող գրքերին և արձանագրվել, որ տվյալ ժամանակաշրջանում լատինականության արշավի դեմ հարուցված պայքարը գաղափարական զենք էր պահանջում, ուստի և պայքարող գործիչները հետամուտ էին առաջ քաշելու և տարածելու հայ և օտար եկեղեցական ու պատմական մատենագրությունից այնպիսի երկեր, որոնք նյութեր էին տալիս տեսականորեն ու պատմականորեն հիմնավորելու և հաստատելու պաշտպանելի տեսակետները. ընդ որում այդ գրքերն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակի կամ անուղղակի, ժխտում էին հայ և լատինական եկեղեցիների միության գաղափարը, Քաղկեդոնի ժողովն ու երկու բնության վարդապետությունը, ջրախառն գինին, Ծննդյան տոնի առանձնացումը և այլն: Հայոց մեջ այդպիսի գրքերը, իհարկե, բազմաթիվ էին, բայց հիշյալ 110-րդ ամբաստանությունը հանվանե մեզ տալիս է միայն առանձին գրքերի կամ հեղինակների 18 անուններ:

Ժողովը մամլուքներին հերթական անգամ գրգռելուց բացի իրական այլ արդյունք չուներ, և կարելի է ենթադրել, որ հայերը պարզապես անտեղյակ էին, որ այդ ժամանակ Արևմուտքը ներքաշվել էր հարյուրամյա պատերազմի մեջ և, հետևաբար, կարողություն ու ցանկություն չուներ միջամտելու Արևելքի գործերին:

Մխիթար կաթողիկոսի բռնած դիրքն էլ բացատրվում է հետևյալ կերպ. հայոց թագավորությունը ծանր կացության մեջ էր, և նա փորձում էր ամեն գնով ձեռք բերել Արևմուտքի օգնությունը: Կաթողիկոսի տատանողական վարվելակերպը պայմանավորված էր երկիրը փրկելու և եկեղեցին անաղարտ պահելու քաղաքականությամբ: Վերջինս ունիթորների նորաձևությունների կողմնակից չէր, ընդհակառակը, հայ եկեղեցու ինքնության ջատագով էր, և թերևս հայրապետի զիջումներն արժեք կունենային, եթե հայոց թագավորությունը լատինների օգնական ուժով վտանգից ազատվեր: Սակայն օգնություն այդպես էլ չստացվեց: Անշուշտ, եթե Հռոմի պապերը իրականում հրաժարվեին իրենց կեղծ խոստումներից, ապա հայերը փկության այլ ուղիներ կորոնեին:

Չորրորդ՝ «**Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը և Սսի 1361 թ. եկեղեցական ժողովը**» ենթագլխում մանրամասն ներկայացվում են Մեսրոպ Արտազեցի (1359-1372 թթ.) կաթողիկոսի օրոք ժողովրդի և հոգևորականության միջև տեղի ունեցած հուզումները, որոնց արդյունքում Սիս քաղաքում գումարվում է նոր եկեղեցական ժողով՝ քննելու Հռոմի պապի, արևմուտքի միապետերի վարքագիծը, ինչպես նաև ստեղծված իրավիճակը: Ժողովում չեղյալ հայտարարեցին Սսի հինգերորդ՝ 1307 թ. և վերջինիս միութենական կանոնները հաստատող Աղանայի առաջին 1316/7 թ.